

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

«ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-135-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7.1-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասի առաջին պարբերությունը «Կենտրոնական բանկի տված» բառերից հետո լրացնել «արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի» բառերով.
- 2) 2-րդ մասի առաջին պարբերությունը «Կենտրոնական բանկի տված» բառերից հետո լրացնել «արտարժույթի առուվաճառքի» բառերով.
- 3) 3-րդ մասը «որը» բառից հետո լրացնել «Կենտրոնական բանկի տրամադրած արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզիայի հիման վրա» բառերով.

4) հոդվածը լրացնել 3.1-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«3.1. Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի, արտարժույթի առուվաճառքի և արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը և պայմանները սահմանվում են բացառապես «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: Այլ օրենքներով լիցենզավորման վերաբերյալ այլ դրույթներ սահմանված լինելու դեպքում սույն մասով նախատեսված գործունեություն իրականացնող անձանց համար գործում են «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասում ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին»» բառերով:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածում՝

- 1) 2-րդ մասում «գործունեության լիցենզիան» բառերը փոխարինել «լիցենզիայի գործողությունը».
- 2) 3-րդ և 6-րդ մասերը «գործունեության լիցենզիան» բառերից հետո լրացնել «(ամբողջությամբ կամ լիցենզիայի ներդիրում նշված որոշակի գործունեության վայրի (վայրերի) մասով)» բառերով.
- 3) 6-րդ մասի երկրորդ պարբերությունում ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին»» բառերով.

4) 7.1-րդ մասում «զրկել լիցենզավորված անձի ղեկավարին կամ լիցենզավորված անձի աշխատակցին Կենտրոնական բանկի տված որակավորման վկայականից, որը» բառերը փոխարինել «հետ կանչել լիցենզավորած անձի ղեկավարին կամ պատասխանատու աշխատակցին իր կողմից օրենքով սահմանված կարգով տրված չառարկելու մասին նամակը: Ընդ որում, սույն մասով նախատեսված պատասխանատվության միջոցը» բառերով.

5) 8-րդ մասում ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին»» բառերով.

6) 10-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո: